Նոր ջանքեր Եվրոպայում հայագիտության զարգացման ուղղությամբ. Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի համգործակցությունը հայագիտության ոլորտում

Էդգար Հովհաննիսյան

ՀՊՄՀ պատմության և իրավագիտության

ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ

Հայագիտությունը, որպես գիտությունների համակարգ, որն ուսումնասիրում է Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը, մշակույթը, լեզուն և գրականությունը, ինչպես նաև մի շարք այլ բնագավառներ, դարեր շարունակ զարգացում է ապրել ոչ միայն հայ հետազոտողների շնորհիվ, այլև օտարազգի: Հայագիտության հարցերով մշտապես հետաքրքրվել են աշխարհի առաջատար գիտական կենտրոններն ու համալսարանները, որտեղ հիմնադրվել և ներկայում էլ գործում են տարբեր հայագիտական կենտրոններ և ամբիոններ: Տարբեր ժամանկաշրջաններում տարբեր երկրներում գործել են տասնյակ հայգետներ, որոնք ունեցել եմ միջազգային հեղինակություն ու ճանաչում և վերջիններիս հայգիտության զանազան հարցերին նվիրված հետազոտություններն ու աշխատությունները հանդիսացել են կարևոր և անփոխարինելի ներդրում հայագիտության զարգացման հարցում:

Ի թիվս եվրոպական այլ երկրների, հայտնի հայագետներ եղել են նաև Հունգարիայում: Հայտնի է, որ հայերը Հունգարիայում հայտնվել են դեռևս միջնադարում[1]: Հայերը հատկապես մեծ թիվ են կազմել Տրանսիլվանիայում[2], որտեղ հիմնադրել են անգամ քաղաքներ, իսկ շատ հունգարաբնակ հայեր կարևոր ներդրում են ունեցել այդ երկրի հասարակական-քաղաքական մշակութային կյանքում, Հունգարիայի տնտեսության մեջ և բանակում[3]:

---

[1] Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից: Հոդվածների ժողովածու, խմբ. Բարխուդարյան Վ., Երևան, 1983:

[2] Տրանսիլվանիան ներկայում ընդգրկված է Ռումինիայի մեջ:

[3] Бертени Иван, Армяне в политической элите Венгрии 19-ом в., Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений (сборник статей и материалов), Ереван, 2012, сс. 123-131.

Հունգարիայի հայկական համայնքի և հայ-հունգարական հարբերությունների պատմության հարցերը[4] մշտապես եղել է հայ և հունգարացի պատմաբանների ուշադրության կենտրոնում: Հունգար պատմաբանները բացի նշված հարցերից հետաքրքրվել են հայագիտության հարցերով ընդհանրապես՝ կարևոր ներդրում ունենալով հայագիկտության զարգացման մեջ: Հունգար հայտնի հայագետներից էր պատմաբան-արևելագետ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, պրոֆեսո Էդմոնդ Շյուտցը (1916-2000թթ.)[5], որը հսկայական դերակատարում է ունեցել Հունգարիայում հայագիտության և հայ-հունգարական գիտական կապերի զարգացման հարցում: Ներկայում Հունգարիայում հայագիտության զարգացման հարցում կարևոր աշխատանք է կատարում երիտասարդ հունգար հայագետներ *Բալինտ Կովաչը:*

Հայտնի է, որ 2012թ. հայտնի իրադարձություններից հետո, երբ հունգարական կառավարությունը Ադրբեջանին արտահանձնեց հայ սպա Գուրգեն Մարգարյանին կազնահարծ ադրբեջանցի հանցագործին, Հայաստանի հանրապետությունը պաշտոնապես դադարեցրեց դիվանագիտական հարաբերությունները Հունգարիայի հետ: Հունգարական կառավարության այս քայլը դատապարտվեց ինչպես միջազգային հանրության, այնպես էլ շատ հունգարացիների կողմից: Մասնավորապես հունգար հայագետները խիստ քննադատությամբ հանդես եկան սեփական կառավարության դեմ: Սակայն ստեղծված քաղաքական իրավիճակում և դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում անգամ անհրաժեշտություն էր ներկայանում զագացնել հումանիտար հարաբերությունները Հունգարիայի գիտակրթական հաստատությունների հետ: Այս հանգամանքը հատկապես կարևորվում է այն պարագայում, երբ արդրբեջանաթուրքական շրջանակները հսկայական միջոցներ են ներդնում այդ երկրում հակահայ քարոզչության և սեփական երկրի դրական իմիջի ձևավորման նպատակով: Գիտական համագործակցությունը կաևորվում է նաև այն առումով, որ կարիք կա նորովի ուսումնասիրել Հունգարիայի հայկական հսկայական պատմամշակութային ժառանգությունը, ինչպես նաև պատրաստել նոր մասնագետներ թե՛ Հայաստանում և թե՛

---

[4] Տես՝ Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից: Հոդվածների ժողովածու, խմբ. Բարխուդարյան Վ., Երևան, 1983:

[5] Բարխուդարյան Վ., «Էդմոնդ Շյուտց», պատմաբանասիրական հանդես, № 1, Երևան, 2000, էջ 290-291:

Հունգարիայում, ովքեր կմասնագիտանան Հունգարիայի հայակական ժառանգաության ուսումնասիրման բնագավառում և հայագիտության մեջ ընդհանրապես:

Այս ուղղությամբ առաջին քայլը կատարվեց 2016թ. մարտին, երբ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը եռամյա համգործակցության պայմանագիր ստորագրեց Արևելյան Եվրոպայի հնագույն համալսարաններից մեկի՝ Հունգարիայի Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանի հետ[6]: Պայմանագիրը ստորագրելու նպատակով 2016թ. մարտի 22-23-ը Երևանում էր գտնվում այդ համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտոր, պրոֆեսոր Սուրոմի Սաբոլչի գլխավորությամբ: Վերջինս այցի ընթացքում եղավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիպեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի հետ[7]: Պրոֆեսոր Սուրոմի Սաբոլչը Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար հանդես եկավ «Եկեղեցական օրենքների հայալեզու հավաքածուների ազդեցությունը համաշխարհային եկեղեցական օրենքների ձևավորման վրա» թեմայով բացառիկ դասախոսութամբ[8]: Հունգարական կաթոլիկական համալսարանի ռեկտորին շնորհվեց նաև ՀՊՄՀ «Պատվավոր դոկտոր»-ի կոչում: Այցի ընթացքում ՀՊՄՀ ռեկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի և Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարնի ռեկտոր Սուրոմի Սաբոլչի կողմից ստորագրվեց համագործակցության[9]: Ստորագրված պայամանագրով երկու համալսրանների միջև համագործակցությունը հիմնականում ենթադրում էր Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանի հումանիտար և հասրակական գիտությունների ֆակուլտետի և Մանկավարժական համալսրանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի միջև: Այդ պայմանգարով նախատեսվում էր զարգացնել գիտական ու կրթական համագործակցությունը երկու համալսարանների միջև, իրականացնել ուսանողների և դասախոսական կազմի փոխանակման ծրագրեր: Պայմանագիրը հատուկ շեշտադրում էր կատարում նաև համագործակցությանը հայագիտության բնագավառում, որը նախատեսում էր Պիտեր Պազմանի Կաթոլիկ

---

[6] Պիտեր Պազմանի անվան կաթոլիկական համալսարանը հիմնադրվել է 1635թ.:

[7] Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան Կաթոլիկ համալսարանի պատվիրակությանը, http://armchurch.info/?s=%D5%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%A3%D5%A1%D6%80%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB

[8] Սույն դասախոսության նյութը տպագրվել է ՀՊՄԸ պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Պատմություն և հասարակագիտություն» տարեգրքի 2016թ. համարում, էջ 197-216:

[9] Համագործակցություն Հունգարիայի Պազմանի Պիտեր Կաթոլիկ համալսարանի հետ, https://aspu.am/hy/content/hamagortsakcutyun_hungariayi_pazmani_piter_katolik_hamalsarani_het/#sthash.pSU4bSfB.dpbs

համալսարանում բացել «Հայագիտություն» մասնագիտութամբ միջազգային ուսումնական ծրագիր: Եվ շուտով՝ 2016թ. սեպտեմբերին, ի կատարումն ստորագրված պայմանագրի և ձեռք բերված պայմանավորվածությունների, Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանում որոշվում է բացել Հայագիտության ամբիոն: Կայացված որոշումը հաստատվում է Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի Մեծ կանցլեր կողմից: Ամբիոնի բացման պաշտոնական արարողությունը տեղի կունենա առաջիկայում՝ 2016թ. հոկտեմբերի 21-24-ը փոխադարձ այցով Բուդապեշտ մեկնող Մանկավարժական համալսրանի պատվիրակության կողմից՝ ռեկտոր պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանի գլխավորությամբ: Նշենք նաև, որ 2016թ. սեպտեմբերից Պիտեր Պազմանի Կաթոլիկ համալսարանի հումանիտար և հասրակական գիտությունների ֆակուլտետի պատմության ինստիտուտի ուսանողներին հնարավորություն է տրվել ստանալ հայագիտության գծով մասնագիտացում և արդեն մեկ տասնյակից ավելի հունգար ուսանողներ նախապատվությունը տվել են ձեռք բերել հենց այդ մասնագիտացումը: Իսկ 2017թ. այդ համալսարանը նախատեսում է Հունգարիայի կրթության նախարարության հաստատմանը ներկայացնել առանձին հայագիտություն մագիստրոսական կրթական ծրագիր:

Այսպիսով, գիտական և կրթական համագործակցությունը Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկական համալսարանի միջև և հատկապես այդ համալսարանում Հայագիտության ամբիոնի հիմնաում և առաջիկայում նախատեսվող հայագիտություն մագիստրոսական կրթական ծրագրի բացում, կարևոր քայլ է ոչ միայն Հունգարիայում, այլ Եվրոպայում հայագիտության զարգացման ուղղությամբ: Հայտնի է, որ հատկապես վերջին տարիներին աշխարհի շատ հայգիտական կենտրոններ ու ամբիոններ տարբեր պատճառներով կամ փակվում են, կամ էլ փակման եզրին են: Ներկայում օրակարգային խնդիր է օտարազգի երիտասրադ հայագետների պատրաստումը: Ուստի հայագիտության ոլորտում հայկական ու հունգարական համալսարանների համագործակցությունը և Հունգարիայում բարձրագույն ուսումնական հաստատությունում առաջին անգամ Հայագիտության ամբիոնի հիմնումը նոր էջ կարող է բացել հայագիտության զարգացման ասպարեզում: